ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/35

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի 02.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 02.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն համաձայն չէ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով հայտարարված գնանաշման հարցման ընթացակարգի 16.02.2018թ. բացման նիստի արձանագրության 2-րդ կետի հետ, այն է՝ «Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացրած հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը: Հանձնաժողովն ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ բոլոր մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված և ներկայացված են «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով հայտարարված գնանաշման հարցման հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին

համապատասխան, բացառությամբ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտի՝ գնային առաջարկին կից ծառայությունների մատուցման և փոխարինվող ապրանքների գնացուցակի (հավելված 4.1) ոչ բոլոր տողերն են լրացված, մասնավորապես, 10-րդ բաժնի 304-րդ տողը, 11-րդ բաժնի 313-րդ տողը, և «շարժիչ» բաժնի 3-րդ տողը»:

«Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն հավաստում է, որ տվյալ գնացուցակը լրացնելիս տեղի է ունեցել բացթողում և այդ տողերում պետք է գրվեր 0 «զրո» թիվը, որը գնառաջարկի մեջ է և ոչ մի փոփոխություն չի կարող առաջացնել: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին 3-րդ պարբերության համաձայն՝ գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի պրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է, իսկ այս դեպքում պատվիրատուի կողմից հատուցում չի լինում, քանի որ ծառայությունների դիմաց վճարը «զրո» դրամ է:

Բացի այդ, «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն գտնում է, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի, այն է՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ-ի կողմի պետք է փաստաթղթերը շտկելու հնարավորություն տրվեր»:

Ելնելով վերագրյալից, Ընկերությունը Բողոքով խնդրել է վերանայել ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ-ի կողմից ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի որոշումը և 1-ին չափաբաժնով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ-ին:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Սմբատ Մելիքսեթյանը, Անի Չերքեզյանը և Ռուզաննա Կարապետյանը:

2. <u>ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.03.2017թ. թիվ ՀՍ/6265-18 գրությամբ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 02.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից 2018 թվականի փետրվարի 9-ին հայտարարվել էր ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր էին ներկայացրել թվով երեք ընկերություններ՝ այդ թվում «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն:

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված հայտերի գնահատումն իրականացրել է հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են» և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով. «Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով» սահմանված պահանջներին համաձայն:

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.4 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ ընդ որում, հավելված 4-ի «Ընդհանուր գինը» սյունյակում լրացվում է տվյալ չափաբաժնի գծով նախատեսված բոլոր ծառայությունների մատուցման և փոխարինվող ապրանքների համար բոլոր տողերով առաջարկված գների հանրագումարը: Միաժամանակ, հրավերի հավելված 5-ում սահմանված է նաև, որ լրացվում են ծառայությունների մատուցման և ապրանքների

գնացուցակի բոլոր տողերը, ծառայությունների մատուցումը տվյալ տողի համար անվճար կատարվելու դեպքում լրացվում է 0/զրո/: Գինը ներառում է բոլոր հարկերը և տուրքերը:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովի որոշմամբ մերժվել է «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացրած հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ գնային առաջարկին կից ծառայությունների մատուցման և փոխարինվող ապրանքների գնացուցակի /հավելված 4.1/ ոչ բոլոր տողերն են լրացված՝ մասնավորապես, 10-րդ բաժնի 304-րդ տողը, 11-րդ բաժնի 313-րդ տողը, «Շարժիչ» բաժնի 3-րդ տողը լրացված չէ:

Այսինքն, Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համաձայն, և գնահատման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում, հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 02.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 07.03.2017թ. թիվ ՀՍ/6265-18 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.02.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտարարվել է «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 16.02.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «գ» ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը նվազագույնն է նույն չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկների թվից և կազմել է 1,393,758.33 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացրած հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը: Հանձնաժողովն ուսումնասիրել է հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրել է, որ բոլոր մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված և ներկայացված են «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանաշման հարցման հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխան, բացառությամբ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտի՝ գնային առաջարկին կից ծառայությունների մատուցման և փոխարինվող ապրանքների գնացուցակի (հավելված 4.1) ոչ բոլոր տողերն են լրացված, մասնավորապես, 10-րդ բաժնի 304-րդ տողը, 11-րդ բաժնի 313-րդ տողը, «Շարժիչ» բաժնի 3-րդ տողը:

Նույն արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշել է «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

«Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված գնային առաջարկին կից գնացուցակը լրացնելիս տեղի է ունեցել վրիպում, ինչի արդյունքում նշված ցուցակի որոշ տողեր, որոնցում պետք է

նշվեր 0 («զրո») թիվը, մնացել են չլրացված, ինչը, սակայն ըստ Ընկերության գնային առաջարկի մեջ որևէ փոփոխություն առաջացնել չի կարող: Հետևաբար, Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի գնահատման ժամանակ պետք է հիմք ընդունվեր համակարգում կցված՝ Ընկերության կողմից հաստատված գնային առաջարկը: Վերը նշվածով պայմանավորված՝ Ընկերությունը գտնում է, որ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի հայտը մրժելու «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանաշման հարցման գնահատող հանջձնաժողովի որոշումն իրավաչափ չէ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:
- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերի N4 Հավելված հանդիսացող գնի առաջարկով սահմանվել է, որ Հավելված 4–ին կցվում է ծառայությունների մատուցման գնացուցակը (Հավելված 4.1), որը կայք է ներբեռնվում մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) և պետք է վավերացված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Միաժամանակ, Հրավերի 8.19 կետով սահմանվել է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և ընտրված մասնակցի որոշումը իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար Հրավերի Հավելված 4-ով՝ մեկ թվով ներկայացված

ընդհանուր գնային առաջարկը ներկայացվել է Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և եղել է նույն չափաբաժնի մասով առաջարկված գներից նվազագույնը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (...):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է գնային առաջարկին՝ Հավելված 4–ին կցված ծառայությունների մատուցման գնացուցակի առանձին տողերում գների բացակայության հիմնավորմամբ, այսինքն, Հանձնաժողովն, ըստ էության, գնահատման է ենթարկել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի արժեքի առանձին բաղադրիչները, մինչդեռ վերջինիս կողմից գնահատման համար հիմք պետք է ընդունվեր համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը՝ մեկ թվով ներկայացված (Հավելված 4):

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից 02.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 16.02.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2

արձանագրության 3-րդ կետով «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**